

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակալավրի կրթական ծրագրով (հեռակա) 2020/2021 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության համար նախատեսվող տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների և ուսման վարձերի**

Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության մրցութային քննությունները	Աստղանիշով (*) մրցութային առարկաները		Ընդունելության տեղերը	Այդ թվում Բ2	Ռեսման վարձավճարը ՀՀ դրամ
		Հլգ*	Օտլ*			
031101.01.6 Տնտեսագիտություն	<b>Մ(գ)</b>	Հլգ*	Օտլ*	100	10	450.000
041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	<b>Մ(գ)</b>	Հլգ*	Օտլ*	125	13	450.000
041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	<b>Մ(գ)</b>	Հլգ*	Օտլ*	190	19	450.000
041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	<b>Մ(գ)</b>	Հլգ*	Օտլ*	110	11	450.000
041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	<b>Մ(գ)</b>	Հլգ*	Օտլ*	40	4	400.000
052201.01.6 Բնապահպանություն և բնօգտագործում	<b>Մ(գ)</b>	Հլգ*	Օտլ*	30	3	350.000
056201.01.6 Վիճակագրություն	<b>Մ(գ)</b>	Հլգ* կամ Օտլ*		25	2	350.000
056802.01.6 Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	<b>Մ(գ)</b>	Հլգ* կամ Օտլ*		50	5	350.000
061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	<b>Մ(գ)</b>	Հլգ* կամ Օտլ*		25	3	350.000
101501.01.6 Զբոսաշրջություն	<b>Մ(գ)</b>	Հլգ*	Օտլ*	35	4	350.000
101801.01.6 Սերվիս	<b>Մ(գ)</b>	Հլգ*	Օտլ*	30	3	350.000
Ընդամենը՝				770	77	

Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության մրցութային քննությունները	Աստղանիշով (*) մրցութային առարկաները		Ընդունելության տեղերը	Այդ թվում ԲԶ	Ուսման վարձավճարը ՀՀ դրամ
		Հլգ*	Օտլ*			
041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ*	Օտլ*	20	2	400.000
041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ*	Օտլ*	20	2	400.000
041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ*	Օտլ*	20	2	400.000
Ընդամենը՝				60	6	

**ՀՊՏՀ Եղեգևածորի մասնաճյուղ**

Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության մրցութային քննությունները	Աստղանիշով (*) մրցութային առարկաները		Ընդունելության տեղերը	Այդ թվում ԲԶ	Ուսման վարձավճարը ՀՀ դրամ
		Հլգ*	Օտլ*			
041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ*	Օտլ*	20	2	300.000
041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ*	Օտլ*	20	2	300.000
Ընդամենը՝				40	4	

աստղանիշով (\*) մրցութային առարկաները – մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի աղյուսակների երրորդ սյունակում նշված տվյալ մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցութային քննության հավասար միավորների դեպքում առավելությունը կտրվի աստղանիշով (\*) մեկ առարկայի դեպքում ավարտական փաստաթղթում առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին, իսկ աստղանիշով (\*) մեկից ավելի առարկաների դեպքում՝ այդ առարկաների գնահատականների առավել բարձր միջին թվաբանական միավոր ունեցող դիմորդներին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2020/2021 ուսումնական տարվա ընդունելության կանոնները» հաստատելու մասին 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N 26-Ա հրամանի դրույթները Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2020/2021 ուսումնական տարվա ընդունելություն:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը, ժամը 18:00-ն:

**Դիմորդների հայտագրումը կատարվում է առցանց:**

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- ա) բակալավրիատի ընդունելության դիմում-հայտ (լրացվում է առցանց),
- բ) միջնակարգ կրթության վկայականի (ատեստատ) կամ միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասին փաստաթղթի (դիպլոմ) լուսապատճեն
- գ) անձնագրի լուսապատճենը,
- դ) 3 x 4 սմ չափի թվային լուսանկար,
- ե) զինվորական գրքուկի (առկայության դեպքում) կամ կցագրման վկայականի լուսապատճենը,
- զ) վերջին 3 տարվա ընթացքում ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության գծով մասնակցում են բանակից զորացրվածների (ԲԶ) համար հատկացված տեղերի մրցույթին, ներկայացնում են նաև տեղեկանք զինկոմիսարիատից (լուսապատճեն)՝ ծառայությունից զորացրվելու վերաբերյալ,
- է) ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի երեխա լինելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին):
- ը) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ) դիպլոմներ,
- թ) «Մաթեմատիկա» առարկայի ավարտական միասնական քննության վկայագիր՝ դրա առկայության դեպքում,

Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 դրամ: Անկախ քննությանը մասնակցելուց և արդյունքից՝ քննության համար վճարված գումարը չի վերադարձվում: Դիմորդը ընդունելության քննության վճարը վճարում է բուհի համապատասխան հաշվեհամարին:

Կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի N 826-Ն որոշմամբ հաստատված կարգով ու ժամկետներում դիմում-հայտ ներկայացրած, սակայն նոր տիպի կորոնավիրուսի (COVID-2019) վարակակիր կամ կոնտակտավոր լինելու պատճառով (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով տրամադրված փաստաթղթով հաստատված) միասնական քննությանը չներկայացած դիմորդը, այդ թվում 2020 թվականի ամառային զորակոչին Հայաստանի Հանրապետության զինված ուժեր զորակոչված, իր ընտրությամբ կարող է հայտագրել և մասնակցել:

1) տվյալ բուհի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին՝ հանձնելով հայտագրած մասնագիտության համար բուհի կողմից սահմանված քննությունը, կամ

2) ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի N 826-Ն որոշմամբ հաստատված կարգով ու ժամկետներում ներկայացված դիմում-հայտում հայտագրած բուհերի և մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով տվյալ առարկայի միասնական քննությունը՝ 2020-2021 ուստարվա համար համապատասխան առարկայի միասնական քննությանը ներկայացվող պահանջներին համապատասխան, դիմում-հայտում (*առանց հայտի փոփոխության*) առաջինը նշված բուհում՝ հեռակա ուսուցման քննատախտակով նախատեսված օրը:

Դիմորդները քննություն են հանձնում Մաթեմատիկա առարկայից: Եթե դիմորդը մասնակցել է միասնական քննություններին և ստացել է դրական միավոր (7.5 և բարձր միավոր), ապա մրցույթին կարող է մասնակցել այդ միավորով: Դիմորդներն իրավունք ունեն, պահպանելով միասնական քննության գնահատականը, հանձնել այդ առարկայի քննությունը և մրցույթին մասնակցել տվյալ առարկայի առավելագույն միավորով:

Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Դրական են համարվում ութ և բարձր միավորները: Մինչև ութ միավորի դեպքում՝ միայն 7.50 և 7.75 միավորները ամբողջացվում (կլորացվում) և հավասարեցվում են 8.0 միավորի, հօգուտ դիմորդի՝ ապահովելով դրական միավորի վաստակումը: Ութից բարձր միավորները գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանումով՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Մրցույթին մասնակցում են այն դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության համար նախատեսված Մաթեմատիկա քննությունից ստացել են դրական միավոր:

Դիմորդները կարող են պահպանել տվյալ տարվա միասնական հանձնած քննության դրական գնահատականը՝ իրենց ցանկությամբ: Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով նաև միասնական կարգով հանձնած քննական առարկայի գնահատականը, տվյալ առարկայից հանձնել քննություն: Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը: Միասնական և ներբուհական քննություններ չհանձնած դիմորդները քննություն են հանձնում բուհում՝ համապատասխան առարկաների միասնական քննություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված մասնագիտության գերակայությամբ: Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան, դիմորդի միավորներով, եթե նշված մասնագիտություններում առկա են թափուր տեղեր:

Քննություններն անց են կացվում հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 15-ը: Ընդունվածների ցուցակները հաստատվում են մինչև հոկտեմբերի 22-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման տևողությունը հինգ տարի է:

- **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Նշված բոլոր փաստաթղթերի բնօրինակները և պատճենները անմիջապես պետք է ներկայացվեն համալսարան՝ դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովի պահանջի դեպքում: Դիմորդների փաստաթղթերը ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ Երևան, Նալբանդյան 128 հասցեով, իսկ Գյումրիում և Եղեգնաձորում մասնաճյուղերի ընդունող հանձնաժողովներում:

Մանրամասն տեղեկությունների համար այցելել [www.asue.am](http://www.asue.am) պաշտոնական կայք կամ զանգահարել (010) 589-443 (010) 593-473 հեռախոսահամարով՝ ժամը 9:30-18:00-ն: